ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Լ. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Զաքարյան.

Ի պատասխան Ձեր 17.06.2019թ. հ.01/273 գրության՝ տեղեկացվում է, որ Բաղրամյան պողոտայի հ.49 շենքի հարակից տարածքը հանդիսանում է ընդհանուր օգտագործման տարածք, որը չի մտնում հիշյալ շենքի սպասարկման տարածքի մեջ: Բնակիչների կողմից նշված տարածքի ցանկապատման աշխատանքները վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից դադարեցվել են, քանի որ այն դիտարկվում է որպես հողազավթում:

Տեղեկացվում է նաև, որ հարևան ծաղկի սրահի կողմից օգտագործվող տարածքը ևս չի մտնում Բաղրամյան պողոտայի հ.49 շենքին հատկացված սպասարկման տարածքի մեջ:

Ներկայումս վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից, հիշյալ տարածքի համար, պատրաստվում է բարեկարգման սխեմա, որով նախատեսվում է տարածքի բարեկարգում, կանաչապատում և ճաղաշար՝ 60 սմ բարձրությամբ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Բաղրամյան պողոտայի հ.49 շենքի հարևանությամբ՝ առանց հողօգտագործման իրավունքի պետական գրանցման օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ապօրինի տիրապետումից ազատելու և այդ հողամասը Երևան համայնքին հետ վերադարձնելու հարցի քննության նպատակով, Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից հարուցված վարչական վարույթի շրջանակներում քաղաքացի Մասիս Բաղդասարյանի նկատմամբ 06.06.2019թ. կազմվել է հ.029716 արձանագրությունը և այն ուղարկվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժին՝ հիշյալ վարչական գործը քննելու նպատակով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ